

Անոնք որ Պէյիտի տուրք վճարելը վաճառքները ուրիշ ապրանքներ վաճառելու յատկացած խանութներու կամ մթերանոցներու մէջ վաճառելու անհրաժեշտ է որ արտօնագիր մը ստանան՝ Պէյիտի տուրքը հետեւեալ յօդուածին մէջ որոշուած կերպով վճարելով։

Այս կարգի վաճառողները թէ որ անհատական ընեն արտօնագիր առնելու, վերը յիշուած արտօնագիր չունեցող անհատները ալ պիտի դատուին ո՛րչափ և ո՛րք կէ եկած ապրանք ըլլայ վաճառածին։

ՅՕԴ. 3. Խանութներուն ու մթերանոցներուն վարձակաւ արժէքը առաջին յօդուածին համեմատ արդարութեամբ և անկողմնասիրութեամբ պիտի որոշուի, և մէկը կարող չպիտի ըլլայ Պէյիտի տուրքը դրանալ՝ պատճառելով թէ անիրաւ կերպով որոշուած է։

Առաւարտութիւնը՝ հարկ եղած առանձին ստիպում պիտի բանեցնէ տուրքին վճարմանը համար։ Անոնք որ իրենց անխառնութիւն եղած համարին, պէտք է որ արեւմտեան մը ստան անուղղակի հարկաց վարչութեանը, և թէ որ դործը քննուելով իրենց բողոքին անիրաւ ըլլալը հաստատուի, իշխանութեան անօրուտ աշխատանքը պատճառելուն համար իրենցմէ պահանջուած տուրքին եռապատիկը պիտի վճարեն։

ՅՕԴ. 4. Ով որ ուղէ տարւոյն մէջ Պէյիտի տուրք վճարելը ապրանքներ վաճառելու համար խանութ մը կամ մթերանոց մը բանալ, կամ տնտիւսական ներու և հասարակաց պարտելու տեղերը նոյն ապրանքներ վաճառել, պէտք է կանխաւ ծխախոտի մատակարարութեան երթայ և վերջիշեալ տրամադրութեանց համեմատ Պէյիտի տուրքը վճարելով կանոնաւոր արտօնագիր մը ստանայ։

Ասանկ պարագաներու մէջ՝ առնուելիք տուրքը երեք ժամանակի վրայ պիտի բաժնուի։ 1՝ յունիս 1էն սեպտ. 30, 2՝ հոկտ. 1էն յունուար 31, 3՝ փետր. 1էն մայիս 31։

Առաջին շրջանին մէջ բացուած խանութները՝ Պէյիտի տուրքը ամբողջ տարւուան մը համար պիտի վճարեն վարձակաւ արժէքին՝ համեմատ։ Երկրորդ շրջանին մէջ բացուածներն ու թաւանակ համար պիտի վճարեն։ Երրորդ շրջանին մէջ բացուածներն ալ չորս ամսուան համար։ Առաջին շրջանին մէջ բացուածները ամբողջ տարեկան պիտի վճարեն թէ և շրջանին վերջին օրը բացուած ըլլան։ Այսին կանոնը պիտի պահուի երկրորդ և երրորդ շրջանին մէջ բացուածներուն համար ալ, և արտօնագիրներն այս տրամադրութեան համեմատ պիտի գրուին, որ նոյնպէս պտուղ տեղով վաճառողներուն և Սէրիի բաշտողներուն համար ալ գործադրելի պիտի ըլլայ։

ՅՕԴ. 5. Պէյիտի տուրքը վճարուած ըլլալուն վրայոյ արտօնագիրները պէտք է որ առանց ընդգիծութեան ցոյց տրուին հարկահաւաքներուն՝ երբոր տեսնելու դէպքէն՝ ամեն կարգի խանութագաններն որ այս տուրքը վճարելու ենթակայ են։ Այս մարդիկ որ ներկայ կանոնադրութեան հրապարակուած թուականին մինչև երեք ամիս անհոգութեամբ արտօնագիր առած չըլլան, վերը յիշուած արտօնագիր չունեցող անձանց պէս պիտի դատուին ինչ պտուղաւ և արդարացուցիչ փաստ ալ ցուցնելու ըլլան։

Անոնք որ տարւոյն ընթացքին մէջ այս առաւարտէն հրապարակուած իրենց խանութը ձգելով ուրիշ տեղ երթան, և կամ քաղաքական կանոնաց դէմ դործելով խանութինն դողուի, վճարած տուրքերն իրենք ևս ուղերւ կամ յառաջիկային դերհաշիւ գրել տալու իրաւունք չեն պիտի ունենան։ Այլ պիտի պարտաւորին նոր տուրք վճարելու և նոր արտօնագիր ստանալու ամեն մէկ տարւուան և ամեն մէկ տեղի համար։

Պարտելով և Սէրիի բանալով վաճառողներուն տրուած արտօնագիրները միայն Կ. Պօլսոյ և արուարձաններուն համար են։ Տէրութեան դատարաններուն

մէջ չպիտի անցնին։

ՅՕԴ. 6. Պարտող և Սէրիի բացողները չպիտի կրնան ո՛չ Կ. Պօլսոյ և արուարձաններուն փողոցները և ոչ շուկաները վաճառել, ալ միայն տնտիւ վաճառներու և հասարակաց ձեռքիներու մէջ։

Թէ որ հակառակը ընեն, իրենց արտօնագիրը ձեռու ընուն պիտի առնուի և ծխախոտի մատակարարութեան տեսչութեանը դրուելով պիտի ջնջուի։ Թէ որ արտօնագիրներն տալ չուզեն, արտօնագիր չունեցողներուն կերպով պիտի դատուին։

ՅՕԴ. 7. Թէ որ խանութագան մը արտօնագիրը կորսնցնէ, պէտք է անյապաղ նոր արտօնագիր մը խնայէ ծխախոտի մատակարարութեանն, և ան ալ նոր մը պիտի տալ կորսուածին տեղ՝ անոր քաւորը գնովը՝ տնտիւսներուն մէջ եղած արժաւորութեան համեմատ։ Այս արտօնագրին մէջ նշանակուած պիտի ըլլայ կորսուած արտօնագրին տեղը արուած ըլլալը, տնտիւսներուն մէջ եղած արժաւորութեան համեմատ։

Թէ որ Պարտող կամ Սէրիի բացողները կորսնցնեն իրենց արտօնագիրը, անոր նոր արտօնագիր տրուելու համար նորէն հարկու գործու չպիտի վճարեն, որպէս զի խարդախութեան առաջըն առնուի։ Վասն զի ասանց հաստատուն տեղ չունենալով՝ կրնան իրենց արտօնագիրը վաճառել և ձեռքէ ձեռք անցնել։

Այն խանութագանը և պարտող կամ Սէրիի բացողը որ հարկահաւաքին ուղարկուած ամեն չորս իր արտօնագիրը ցուցնել, և կորսնցնուած ըլլալ, ժամանակին ուրիշ մը առած չըլլալուն համար ալ կանց չպիտի կախուի ցուցնուած պտուղներուն, ուստի և արտօնագիր չունեցողներուն կերպով պիտի դատուի։

ԳԼՈՒԽ Բ.

Գաւառներուն մէջ Պէյիտի տուրքին հաւաքումը։

ՅՕԴ. 8. Ամեն գաւառացի նահանգաց և զիւղօրէից զխաւոր քաղաքներուն կամ աւաններուն մէջ՝ ուր Սիւրբաբի տուրքին տնօրէնը, անոր երկրորդ կամ գործակալը կը նստի, և ամեն գերբուն ու նաւահանգիստներուն մէջ՝ ուր ջարդուած ծխախոտ և Պէյիտի տուրքին ենթակայ երող միւս վաճառքները կը ծախուին թէ՛ միայուն կերպով և թէ՛ փոխադրութեամբ, անդոյն Սիւրբաբի տնօրէնը, երկրորդը կամ գործակալը իր սահմանին մէջ գտնուած և այս ապրանքները վաճառող ամեն մթերանոցներուն ու խանութներուն ցուցակը պիտի պատրաստէ։

Յետոյ յանձնաժողով մը պիտի կազմուի տեղական ժողովին մէկ անդամէն, տեղւոյն բնակաց երկու երեւելիներէն ուրիշ մէկը տաճիկ պիտի ըլլայ և միւսը տաճիկ չեղող հասարակութեան, ծխախոտ վաճառող արուեստաւորաց մէկ երեւելիէն և ծխախոտի մատակարարութեան գործակալէն, և այս յանձնաժողովը անկողմնասիրութեամբ և արդարութեամբ պիտի որոշէ յիշեալ մթերանոցներուն ու խանութներուն վարձակաւ արժէքը, և տուար մը պիտի շինէ որուն մէջ պիտի նշանակուին ամեն մէկ տեղերուն դիւրը, անոնց տեղերուն և վարձակաւներուն անունները, վաւերական Պէյիտի թուղթ ունեցողներն ու չունեցողները և ամեն մէկուն վարձակաւ արժէքը։

Այս տուարը յանձնաժողովին անդամներէն ստորագրեալ ու կնքեալ պիտի ըլլայ։

Պէյիտի տուրքը ծխախոտի մատակարարութեան գործակալները պիտի հաւաքեն՝ Պէյիտի չունեցող մթերանոցներուն ու խանութներուն տարեկան վարձուն արժէքին վրայ հարկւելին երսուն հաշուելով և վաւերական կէտիկի թուղթ ունեցողներուն ալ տարեկան վարձուն արժէքին վրայ հարկւելին տասն և հինգ հաշ-

ուելով ըստ առաջին յօդուածին։

Այս տուրքերն ամբողջ կանխիկ պիտի վճարուին վարձակաւներէն կամ տեղերէն՝ տեղութեան անտուկներուն ընդունած դրամով, և փոխարէն արտօնագիր պիտի տրուի անոնց։

Թէ որ մթերանոցի մը կամ խանութի մը վարձակաւ արժէքին վրայ հաշուած տարեկան տուրքին գումարը յիշուած ընդունուած պահաւ ըլլայ, անոր մէջ նստողը ինչպէս նաև ներկայ կանոնադրութեան ենթակայ երող ապրանքները վաճառող կամ Սէրիի բացողները յիշուած ընդունուած տարեկան տուրք վճարելով արտօնագիր պիտի ստանան։

1862 յունիս 1էն ետեւ առնուած կամ ծախուած Պէյիտի թուղթերը անվաւեր և ոչինչ պիտի համարուին ուրիշ և տրուած ըլլան։ Եւ այն Պէյիտիներն ստացող մթերանոցները կամ խանութները առաջին յօդուածին մէջ յիշուած ներու կարգը դրուելով՝ անոնց կերպով տուրք պիտի վճարեն։

ՅՕԴ. 9. Սիւրբաբի տնօրէնը մը երկրորդ մը կամ գործակալ մը գտնուած քաղաքներէն գերբուն նաւահանգիստներէն տնտիւսներէն և վաճառանոցներէն զստ ուրիշ տեղեր գործակալ չպիտի զտնուի Պէյիտի տուրք հաւաքելու համար։

ՅՕԴ. 10. Ամեն մէկ տնօրէնի, երկրորդի և գործակալի կողմէ իր սահմանին մէջ գտնուած պարտող և Սէրիի բացողներուն արուելը արտօնագիրներուն նպատակը նոյն սահմանին մէջ անոնց շրջապատութիւնը զիւրացնել ըլլալով, թէ որ նոյն սահմանէն ուրիշ սահման մը երթան, հոն իրենց արտօնագիրներն արժէք չպիտի ունենան, և պիտի պարտաւորին առաջին յօդուածին մէջ որոշուած տուրքը վճարելով նոր արտօնագիր մը առնելու։

ՅՕԴ. 11. Այս գլուխին մէջ նշանակուած պայմանները մէկդի առնելով, առաջին գլխոյն մէջ մայրաքաղաքի համար պարտականեալ տրամադրութիւնները ձգելու գործադրելի պիտի ըլլան տեղութեան գաւառներուն համար ալ, և Սիւրբաբի տնօրէնները, երկրորդները և գործակալներն հաւասարապէս պիտի հսկեն անոնց գործադրութեանը։

Պէյիտի արտօնագիրներուն վրայ հարկահաւաք գործակալներուն կնքը պիտի գտնուի։

Ապրանքական հրամանաւ

Թոքլիսի Օսմանեան դեսպան իւսթաթիպէն պէյը երկրորդ կարգի դեսպան անուանեցաւ Խալիլի տեղութեան քով, և այս առթիւ Խալիլի աստիճան տրուեցաւ իրեն։

Գարձեալ կայսերական հրամանաւ

Հէրաքի կառավարիչ Խալիլի փաշային Բուսթիկի Պէյըրպէյութեան աստիճան տրուեցաւ։

Թարսուսի (Տարսուս Կիլիկիոյ) գաղմագամ Իսմայիլ Լուսթիկի պէյին Սիւրբաբի աստիճան տրուեցաւ։

Ալէքսանդր Բալիսի պէյը Սէյիտի գաղմագամ անունեցաւ։

Երեկ ժամը 6ին օգոստոսիւս Ինքնակալը

Թալիսի շոքեշարփ Ֆրգաթնով մայրաքաղաքէն մեկնեցաւ Խալիլի երթարու համար, ուր նորաշէն Ֆրգաթնի մը ծովը լինելուն ներկայ պիտի գտնուի։

Երկրորդ փոխարքայ Բարձր Սալիմ փաշան ալ՝ որուն հիւանդութիւնը անցածի պէս է՝ օգոստոսիւս Սուլթանին ուղեկից եղաւ իւր Ֆէյիկ Ռէհաթ փաշանով, Խալիլի ալ ուղղակի Ալէքսանդրիա պիտի երթայ։

Ահապառ Սուլթանին ուղեկից եղաւ նաև ծովային գործոց պաշտօնէսի Բարձր Սէյիտ Լուսթի փաշան։

Ազգային գործոց ներկայ անարեւակաղ և սարսամ վիճակին տխուր հետեւանքներն օր քան ցօր առաւել զգալի ըլլալով ազգասէր սրտերու, երէկ՝ ուրբաթ՝ մայրաքաղաքի գլխաւոր եկեղեցականներն ու հարկերի չափ աշխարհական ելեւելի և պատուաւոր անձինք ամենապատիւ Յաւոր Սրբազանին հրաւիրմամբ ժողովեցան Խալիլի տար Սէրապի գաղտնի, և քրիստոնէական եղբայրներութեան ու անկեղծ ազգասիրութեան հօգուով միացած՝ որոշեցին ազգերնուս այս ներկայ ցաւալի վիճակին վերջ տրուելու համար աղերսաւոր մը մատուցանել կայսերական բարեխաղ կառավարութեան։ Այս մտօք աղերսաւոր մը դրուեցաւ և ամենէն ալ ստորագրուելով առժամանակեայ վարչութեան տրուեցաւ որպէս զի յայտագրով մը կայսերական կառավարութեան ներկայացնէ։

Հետեւեալ նամակը Բէրայի թաղէն քանի մը պատուաւոր անձինք զգաւ են մեզ ի հրատարակութիւն։

«Մեծարգոյ խմբագիր Մատիս պատուական խաղաղ»։

«Մեր դարմանքը մեծ եղաւ երբ ի մայրս որ Աճէմեան Տ. Գրիգորը նորէն Բէրայի եկեղեցին ղեկուար է, վարչութեան որոշմամբ, որպէս զի իւր հոգեւոր պաշտօնը շարունակէ։

«Ինչու, վասն զի Բէրայի ժողովուրդին մէկ մասը և քահանայից դասը համաձայնեցին ինչեւր քահանայ մասնադրութեան ինդիքու, բաւական համարելով անոր քաջած հարձանքը, կամ ըստ ոմանց ապագիտարանքը։

«Բայց Տ. Գրիգոր Աճէմեանը անբաստանութեան ներքեւ ձգուած է։ Տ. Գրիգոր քահանային դասը գեռ տեսնելու մէջ Տ. Գրիգոր քահանայ իր հոգեւոր պաշտօնին հակառակ ծանր յանքներ գործած է։

«Արդ՝ կը հարցունեք հրապարակաւ որ այս դատէն Տ. Գրիգորը անպարտ եղած է թէ ոչ։

«Այլէ անպարտ դատուած է անոր համար որ քահանայից դասը և ժողովուրդեան մէկ մասը զանի նորէն ուղեր են, արդարութիւնը և եկեղեցական օրէնքը զայն չեն կրնար ընդունիլ։

«Եթէ ժողովուրդեան ձայնը եկեղեցականի մը ամբաստանութիւնը կրնայ ջնջել, ինչու համար Տրապիզոնի Երազմ վարդապետն ալ առանց դատաստանի իր առաջնորդութեան չի ղեկուար, քանի որ լայն ի չորս հինգ հօդէ, բոլոր Տրապիզոնից պայ կուգին։

«Եթէ Խալիլի տար Տ. Թաղէն սին համար եկեղեցական օրէնքը անաչառ է, այնքան անաչառ որ չորս հինգ ամիս զանի ատեններու մէջ հինցուց, ինչու համար նոյն օրէնքը Տ. Գրիգորի համար մեղմ և անուշ է, այն Տ. Գրիգորին համար, որ վարչութեան կողմէն կազմուած կրօնական յանձնաժողովին ընկեր դատաստանը ճանչնալ չուզէ։

«Արեւօք այս կրօնական օրէնքը Տ. Թաղէնի համար զատ իւր, և Տ. Գրիգորի համար զատ է, կուգէինք հասկնալ։

«Մեր միակ արդարութեան ձայնին անտարբեր չըլլալուն համար այս հարցմունքները առաջ բերելը, որպէս զի պատասխան մը ընդունինք։

«Եթէ վարչութիւնը կը կարծէ որ անուշ տեղը կայէ Գրիգորեանութիւնը կը քալէ, երբ արդարութեան օրէնքը անտես կառնուի, շատ կը սխալ ըստ որում Բէրայի ժողովուրդեան մէկ մասը ալ Տ. Գրիգորը իրեն քահանայ ձեռնադր չի պիտի կարենայ ճանչնալ, քանի որ ծանր ամբաստանութեանց կէտերը (60 չափ) տեղեկագրով վարչութեան դիւանաւոր կեշտ պիտի ըլլայ։

«Ուստի եթէ այսօր Բէրայի բոլոր ժողովուրդը ինչ «Տ. Գրիգորը կուգէնք, անպարտ է Գրիգոր, արդարութիւնը թէ

և մէկ կամ երկու բողոքարկուաց ձայն
ընդ պիտի դուռայ: «Տ. Վարդուրը ամ
բաստանութեան տակէն»:

«Խնդրելով, մեծարդոյ խմբագիր,
որ այս երկու անգ զրուծիւնս պատուա-
կան լրագրողի մէջ անցունելու չնորհ
նէր»:

«Մտաք խորին յարգանք
Բերա Բերայի քանի մը
14 սեպտ. 1862 Թաղեցիք»:

Կարինէն հետեւեալ նամակը կը գրեն
մեզ:

Յարգոյ խմբագրապետ և սնորհն Մասիս
պատուական լրագրոյն:

Բնիկ կարնեցի մարդործ Մ. Յովհաննէ-
սի որդի մեծացարդ խաչատուր արամ, իւր խո-
հակաւորութեամբն և անգաւթական եռանդո-
վը կարնոյ քաղաքիս պատուաւոր իշխանաց
կարգն անցած է:

Աղէկ համոզուելով այս աղաւթի անձը
թէ նոյնը չէ որ մարդ մեծ կընէ, այլ դործ-
քը, ուստի դործով իւր աղաւթիւնութիւնը
հաստատուելու համար, անցնել տարւոյս մէջ
երբոր գերապատիւ Տ. Յարութիւն սրբազան
Արքեպիսկոպոս բարեկարգ առաջնորդն Ս.
Ղուսաւորչի վանից եկեղեցին ի հիմանդ կանո-
նելու ծանր աշխատութիւնը յանձն առաւ տը-
րօք Աղլիս: Աս աղլուր կիրք (քիրէճ) որչափ
դիպցնայ ինքնութեան իւր քառակէն չնորհեց-
նամանակ եկեղեցւոյ մէջ ի դաժն (ալիք) և ու
իւր դրամով զարնել տուաւ: Այս բարեկարգ
անձնէ դարձեալ, որ միայն ընդ միայն քաղա-
քին Ս. եկեղեցւոյ զանգատունը որ շարժէն
ի հիմանդ կործանեալ էր, անցնել տարին ըս-
կըսել տալով սրբաւոր քարերով չորս սիւնի
վրայ շինել տուաւ, որուն ծախքը մինչև և ու
թանաքուն հազար դահեկանի հասաւ:

Օրհնեց Աստուած զինքն ամեն յաջողու-
թիւններ տալով, և ի նշան հաճութեան իւրոյ
ամենայն փառաբանութեամբ ի կատար հասցց
իւր Աստուածահաճոյ ձեռնարկութիւնը, որ
արդ ամեն տեսող աղաւթի չի կրնար որ
չխանդաղաւթի, ու օրհնութեամբ չի չի իւր
անունը: Կարնոյ քաղաքիս բնակիչքն ալ չը-
նորհապարտ ծանախելով զիրենք նորին բարե-
սիրտ աղաւթու առատաձեռնութեան, և
տեսնալով որ մեծ համաւորութեամբ գաղանի
պահել կամեցաւ իւր անունը չըրոյնելով գոնէ
չիշատակութիւն մը նոյն գեղեցիկ շէնքին վը-
րայ, կը փութան ան առաջնորդութեան միջ-
նորդութեամբ պատուական Մասիսի ձեռնա-
պահանքով արձանագրել իւր և երկու կը-
բարցն Մահտեսի Ստեփաննոս և Յարգիս ա-
ղալից անունները, և իրենց անբաւ չորհա-
կալութիւնը մատուցանել նոյն յարգելիաց:

Կաղաչում, ս աղաւթի խմբագրապետ,
բարեհաճիք փոքրիկ անիկան մը չնորհել Մա-
սիս պատուական լրագրողի էջերուն մէջ յու-
րախումբ իւր Աղլիս, և ի բարի յորդոր նոյն
օրինակ իշխանաց, որպէս զի անուններու
հետ միտ գործը ընդմիջ ալ օրհնութիւն ձեռնի
և գովութիւն մարդկան:

Ընդունեց իմ խորին մեծ արմատաց հա-
ւատարմք, որը ձեզ միշտ մատուցանել ըզձամ
ի օրոքն:

1862 օգոստ 30 Ն. Կարնեցի Մ.
Կարնի Զ. Գրեմ:

Հետեւեալ նամակն ալ Մերաստիոյ
Սենեքերիմեան ընկերութեան յարգոյ ան-
գամներէն մէկը գրած է մեզ:

Մեծարդոյ խմբագիր:

Սերաստացի մահտեսի Առաքել աղա ձի-
վէշէկեանը երկար ժամանակէ ի վեր շնորհա-
տանի կողմէր թափառելիս զինի, վաճառա-
կանութեան տուն և հաստատէ ի ձիւտոն:
Սակայն անցնելներ ձիւտոնի աղետալ անցից
միջոցին բողոքովն վնասուած ըլլալով, և իւր
մէկ հատիկ դաւանի ալ կորսնցնելով մեծ զո-
քաղութեան մէջ Պոլիս եկաւ, և Բ. Գրան
կառավարութեան չնորհիւ մօտ օրերս իւր վը-
նան ալ ստացաւ: Սոյն պատուական թիւով
և Սերաստացւոյ անդու իւր անձնուէր ձեռ-
քն ի յառաջադիւթիւն Սերաստիոյ վար-
ժարանին տեսնելով, և Սենեքերիմեան ըն-
կերութեան բարի նպատակը գովելով, բարե-
հաճեցաւ 10 օտանան իւր չնորհել ընկերու-
թեան, որով Սենեքերիմեան ընկերութիւնն
աղ իւր չնորհակալութիւնը յիշեալ աղին հոյ-
րեակցին մերտէ հրապարակաւ մատուցանե-
լու պարտքը նուազաւոր յանձնելով, կը խնդ-
րեմ որոնք նամակս ձեր պատուական լրագ-
րոյն միջոցաւ հրատարակելու չնորհ ընել մեզ

բարեհաճիք: Մասիս խորին յարգանք
Պոլիս Թուրքի Կարնեցի
40 սեպտ. 1862 Մեք-Պոլիս:

Ե. Օ. Գ.

Թաղեցիք խմբագիրն ու մտադ-
եայ դրամոյ իրենց առջի օրինակը ար-
ժէքին իջնադ կը պարտաւորէ մեզ լրագ-
րոյս զինն ալ իւր նախկին պայմաններուն
իջեցնելու:

Մեր արդոյ բաժանորդներէն շատերը
զիսն և իւր իշխն ու Մեքիսիս օսկին
հարկը զուրուշ եղած ժամանակը լրագ-
րոյս տարեկան գինը 120 դուրուշ էր:
Երբոր ոսկին հետզհետէ բարձրանալ ըս-
կըսաւ, մենք ալ ուրիշ լրագրաց պէս վը-
րադիր մը ընելու հարկաւորեցանք լրագ-
րոյս գինն վրայ, բայց ոչ դրամոյ բարձ-
րանալուն համեմատութեամբ: Վասն զի
դրամոյ և տարգրական ծախսոյ կրկնա-
նոսրամիլ և աւելի բարձրացած ժամանակը
լրագրոյս գինը 30 դուրուշ կամ 115 միայն
աւելցած էր: Եւս անհամեմատութիւնը
ինչպէս յայտնի կը տեսնուի մեծ վնաս
կը պատճառէր մեզ, և միայն դրամական
մօտաւորութեան բարեկարգութեան մը յուսով
յանձն առած էինք այս գոհողութիւնը:

Հիմա՝ որ բարեխաւ տէրութեան
չնորհիւ դրամներն իրենց օրինակը գը-
նոյն իջնա, լրագիրս ալ բնականաբար իւր
առջի դրամական պայմանին կը վերածի:

Ուստի ներկայ սեպտ. 1էն սկսեալ,
լրագրոյս տարեկան գինն է 120 դուրուշ
մետաղեայ դրամ կամ 6 արծաթ Մե-
քիսի: Մանրալրաց գինն է 50 դուրուշ:
Ծանուցմանց զինն ալ որ ամեն մէկ տո-
ղին 3 դուրուշ էր, 2 դուրուշ եղած է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքս հրատարակուած անդ-
ղական Հանդէս մը որուն հրատարակիչն
է Տաքթոր Պոլաթ, իւր վերջին թիւերուն
մէկուն մէջ առաջարկութիւն կընէ ընդ-
հանուր արուեստահանրէս մը ընելու ի
Պոլսոյ մէջ 1864ին:

Երբ իսկ արուեստահանրէս մը, կը-
սէ յիշեալ պարբերական թերթը, Օս-
մանեան տէրութեան ժողովարդոյն առկթ
կուտայ օտար երկիրներու լաւագոյն բեր-
քերը տեսնելու ձանձնալու և հատկապէս
լու, և արուեստից ըրած յառաջադիւթու-
թեանցը վրայ ձիւք գաղափար մը ունե-
նալու:

Միւս կողմէն օտարազգաց ու շար-
քութիւնը կը հրաւիրէ Տաքթորապետի բեր-
քերուն վրայ, և կը ձանձնուի անոնց
Օսմանեան տէրութեան ունեցած հա-
րատութեան ընդարձակ աղբիւրները, ու
ընդ խիստ թերի կերպով ծանօթ են օ-
տարաց:

Եւս առաջարկութիւնն ընդները կը
խորհն որ եթէ կայսերական կառավա-
րութիւնը հաւանութիւն տայ, այս ձեռ-
նարկութիւնը ծախքի կողմէն գոյնա-
րութիւն մը չնկարագրենք: Մինչև ան-
գամ կը յուսան թէ մեծ շահ ալ կուտայ
հետեւեալ հաշուին նայելով:

Բերեցեայ պարտի մը	Գուրուշ
Հիւանդան ծախք	9,150,000
Օրը 5000 այցելուք 10 ամիս	
Գուրուշէն, 186 օրը կընէ	9,500,000
7500 այցելուք 5 ամիս ըս- րուշէն, 52 օրը	1,200,000
250 այցելուք 20 ամիս ըս- րուշէն, 52 օրը	1,600,000
5000 ամիսակ ըստ ժամանա- կին 500 գուրուշէն	900,000
Ձանաղան եկամուտք, ցու- ց ալիսէն, զովարար ըմպելի- ներէ, և այլն	780,000
Գուրուշ	15,000,000
Վար երթալով	9,750,000

կը մնայ չորս միլիոն գուրուշէն աւելի
յաւելուած մը, որ ուրիշ ամեն ծախքերը կըր-
նայ պոկել:

Եւ Պոլսոյ մէջ համալսարանական ար-
ուեստահանրէս մը ամբաւ օգուտները
ձանձնողներէն ըլլալով յաջորդ թիւերուն
ալ սրտանց կը կախարհէր, բայց դորձադ-
րութիւնը խիստ դժուարին կերեւի մեզ, չը-
սենք անհնարին, քանի որ տէրութեան դա-
ւառներուն մէջ երկրթութիւնը ձախարհ-
ներ և հարգողակցութեան զիւրի միջոց-
ներ չկան, թողունք ուրիշ հաղարարմէկ
երկրորդական գոյնարկութիւններ:

—Օգոստոսիս Խնդանիւն հրաման
ըլլաւ որ իւր արքունեաց յատկացեալ ամ-
սական փոխանակ լուսնի տնոյն համե-
մատ վճարուելու, յուսաց ամսոյն համե-
մատ վճարուի: Եւս անօրէնութեամբ տա-
րին 15000 քասի կը շահի տէրութեան
գանձը:

—Կայսերական կառավարութիւնը յա-
տուի հրամանագրով մը արգիլեց կամայ
բաց և փայտուն գոյներով վերարկուներ
(Ֆետրաճէ) հագնել և բարակ կապէ լաչակ-
ներ ձգելու:

Թոհաթթի և Ֆերմաթթի ըսուած
արհեստաւորաց և դերձակներուն ալ
յատկապէս պատուէր եղաւ որ ոյնպիսի
բաց գոյներով վերարկուներ չծախեն կամ
չկարեն:

—Պէտքը իւր և Վալաթիոյ քաղաքա-
պետութեան ատենը իմենալով որ յիշեալ
թաղերուն խանութներուն ու նպարա-
վաճառները կառավարութեան կողմէն
որոշուած գնոց յուսակին չեն հետեւի և
առջի գիները պահել կուզեն, պաշտօնա-
կան յայտարարութեամբ մը կը պատուիրէ
հաստատութեան թէ որչափ գինէն ա-
ւելի չվճարեն, և թէ որ գէտ կեցող
զանալի ոտակներով թան մասնէն:

—Սերէկ ըստ ամիսը թէ Ենիճէ գե-
ղի Չորպաճի Հաճի Մերայէլին տունը
հրոյ ծարակ եղաւ:

—Մայրաքաղաքիս յուսաց Վալաթ
թիւ լրագիրը կըսէ թէ տուններուն ու
խանութներուն վարձքը այսուհետ հար-
կաւորն 40 մետաղեայ դրամ և հարկերն
60 քոնսոլիտէ պիտի վճարուի:

—Արուսայէն սեպտ. 12/24 թուով
հետեւեալ կը գրեն մայրաքաղաքիս Քու-
սիէ տ'Օսման լրագրին:

«Եւս անգամ ալ դարձեալ պար-
տաւորուած եմ Պապա Սուլթան և Են-
նիճէ գեղերուն վրայ խօսելու:

«Երէկ ըստ ամիսը թէ Ենիճէ գե-
ղի Չորպաճի Հաճի Մերայէլին տունը
հրոյ ծարակ եղաւ:

«Եւս տունը գեղին ծայրը շինուած
է, կրակը դաշին կողմէն յարկին ներքե-
ւը ձգուել էր:

«Ի եռնէն եկած ջուրը՝ որ Պապա
Սուլթանի բնակիչներն իրենց սեփակա-
նութիւնը կը համարեն, ձախարհ կարծը
ուրիշ, Ենիճէ գեղը առանց կարծի մը
ջուրի մնաց, Ուստի երբոր գեղացիները
հրդեհին տեղը դիմեցին, դաշին կողմէն
հրացանի հարուածներ եկան զերեք ար-
գիլելու որ կրակը չմարնէ, հետեւաբար
գեղացիները պարտաւորեցան տունը թող-
լու որ այրի:

«Տանտերը իւր արտերուն և վարձով
բռնած մեծ ագարակի մը բոլոր բերքերը
տանը մէջ լեցուցեր էր: Կանոնաւոր բան
չկրցաւ աղատիլ: Չիր, եղբարուր կին
գանձներ, տարւոյն հունձքը, շատ մը
բամբակ և բոլոր կարասին այրեցան: Հա-
ղի կրցաւ տանտերը ինքզինքն աղատել
իւր գաւառներուն ու պատաւորացը հետ:
«Իմաց արուեր էր իրեն թէ ասիէ առ-
ջի անցքերուն գէտ դանդաղ և բողբը
ներուն համար իւր տունը կրակի պիտի տոր-
ուի: Եւս կը տեսնէր որ խօսքերն իւր

տարեցին:
«Եւս ութ անձնորք՝ որ հայերը Են-
նիճէի եկեղեցիներ երաժ առնեն վայելիս յար-
ձակեր էին՝ յուսուեցան ու բանան են:
բայց անոնց ընկերները այս հրդեհութիւ-
նն ընելով անոնց վրէժը տուին:

«Վաղարշին կառավարին այս վեղ-
ջին եղեռնադորձութեան լուսն առնելուն
պէս, 30ի չափ Օսման և հս. չափաւոր
Խոճա Մարտը հետն առած անձամբ Են-
նիճէ գնաց:

—Մայրաքաղաքիս անդղական Են-
նիճէ Էրօրտ լրագիրն հետեւեալ լուրը
կուտայ:

Եսկէց քանի մը օր առաջ Պարիզէն
եկած հետազոտական լուր մը կը ծանու-
ցանէ թէ արքունի փառօղապետ Տատեան
վախճաւ: Պոլսոյ պէյ ծանր հիւանդ
է: Եւս ցաւալի լուրին վրայ, Պոլսոյ պէ-
յի օրդին Եսկէք պէյ խիղջ մայրա-
քաղաքէն Պարիզ գնաց:

—Իւրմիկէն կը գրեն թէ Ե. յարկի երկա-
թուղին մէկ մասն ալ Վալաթ-Վալաթէն
մինչև Եսկէս (Եսկէս) շինուած ը-
մնացած ըլլալով, սեպտ. 3/15ին բացուել
է, և այս առթիւ կուզենք մը եղեր է,
որուն ներկայ դատուելին դաւառին կու-
սակալն իւր բարձրաստիճան պաշտօնատար
ներով, երկաթուղին ընկերութեան դը-
խաւոր գործակալները և ամեն աղաք ե-
րկեղեցիները:

Եւս նոր մասին բացուելով երկաթու-
ղին մինչև հիւսն շինուած ու բացուած
մասը 48 անդղական մղոն ծախաց եղած
կըլլայ, որ բոլոր երկաթուղեան կէտէն ա-
ւելի է: Որովհետեւ երկաթուղին բոլոր
երկաթուղեանը (Իւրմիկէն Եսկէս) 84 անդ-
ղական մղոն պիտի ըլլ ևս

—Մուսուլի գաւառին մէջ Ճըր-
ճըր Ելի ըսուած գեղը բնակեալ Տերիշ
Պատրի Մէհմետ անուն տաճիկ մը այս
օրերս իւր տանը բողբոսիքը նորոգելով,
գետնին տակէն հին սափոր մը գտեր ու
բուն մէջ 200 հատ հին դրամ կան, մէկ
քանին Հապիւնցեաց օրէն (Բրիտանոն ա-
ռաջ) մնացած:

Եւս դրամները Պաղատտ զեկուել
են, ուսկից ալ Վ. Պոլիս պիտի գան:

—Մեղրեց լրագիրներն աղետալ լուր
մը կուտան:

Իւրմիկէն մէջ մանր քաղաք խա-
մատան մը մէջ գիշերանց հրդեհ պատա-
հելով, քան տղայք և երկու մուսուլ-
բոցերուն ձախակ եղեր են:

—Մեղրեցի Մարմին-Միթար լու-
գիրը կը ծանուցանէ թէ Ռեւոլուտ անու-
նով քառասուն և ինն տարեկան կին մը
յետին չքաւորութեան մէջ ի յնալով ա-
նօթի մեռեր է:

—Վաղրեց Օսման քաղաքը բնակ-
եալ հարուստ ամուրի մը ժամանակէ մը
ի վեր սրտի ձանձրոյթ մը գգալով, վեր-
ջապէս իւր կեանքը վերջացնելու որոշում
կընէ: Չուան մը կը գնէ, կիջնայ գինի-
ն մատանը և ձեղունին դերանին ինքզինք
կը կտէ: Դեռահասակ սպառուհի մը ոյր
մօտակայ մատանէ մը գինի հանելու իջը
էր, հեծութեան ձայն լսելով, կը մօտե-
նայ և հաւանին դուռը հրելով կը տես-
նէ մեր ձանձրացեալ որ մահուան դէմ
կը կուտէր: Սպառուհի փոխանակ վախ-
նալու և փախչելու, հոն մտաւ կի մը վը-
րայ կեցած դանակ մը կը տեսնէ, և անով
չուանը կը կտէ և օրհատական ազատե-
լով խեղք դուռը կը բերէ:

Չանձրացեալ քանի մը շաբաթ դար-
մանուելով կը բժշկուի արտի ներքիններէն,
կերթայ սպառուհի մը գոնէ, և իւր ե-
րախտադրութիւնը յայտնելու համար իւր
սիրտն ու հարստութիւնը անոր կը նուե-
րէ (ամուսնութեան առումը կուզէ): Եւս
ջերը ժպտելով կը պատասխանէ. «Չեմ
կրնար ընդունիլ ձեր այդ առաջարկու-
թիւնը, վասն զի կրնայ ըլլալ որ օր մը
նորէն ինքզինքնիւ կտնայ և այն
ժամանակը թերեւ չկրնամ ձեզ աղապա-
նել»:

